

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, 21 ՅՈՒԼԻՍ, 1931

ԹԻԻ 12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՄԸ ԱՆՀՐԱԺԷՇՏ Է

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՄՈՒՏԻԻ ԿԵԱՆՔԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ԹՐԳ. Տ. Ճ. Խ.

ՄԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՆԸ. ԻՆԶՊԷՍ ԿՐՆԱՆՔ ԱՐԺԵՑՆԵԼ ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

ՀՈԴԻԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԿՐԾՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ՔԱՂԵՑ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

ՊՈԼՇԷՎԻԿՆԵՐԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

ՆԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

ՀԻՆ ԿԱԶԱ ՔԱՂԱՔԸ

ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ ԵՐԿՈՒ ԺԱՄՈՒԱՆ ՄԷՋ

ՆԱՄԱԿՆԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ե. Ք. ԶԱՆԻՑ ԷՃԸ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈԼԷՃ ՀԱՆԼԵՊ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

ՍՏԱՑԱՆՔ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրից 150 դրուշ սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չհրատարակուող յօդուածներու համար պէտք է զրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, դիւրընթեռնի և մաքուր կերպով:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, 1931 թիւ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ, 1931 թիւ 27

ԲԱԶՄԱՎԷՊ, 1931 թիւ 6

ՓԱՐՈՍ ՀԱՅՑ, 1931 թիւ 6-7

ՍԻՈՆ, 1931 թիւ 7

ԲԱՀՆԻԻՄԱ, 1931 թիւ 12

ԱՌՈՂՋ ԿԵԱՆՔ, 1931 թիւ 6

ՄԻՈՒԹԻՆ, պաշտօնաթերթ Հ. Բ. Ը.

Միութեան թիւ 148, Ի. տարի

Հասցէ՝ 11 Square Alboni, Paris (16^e)

ԱՊԱՀՈՎ

ԱՃԱՆ

ԱՆՈՒՇ ԼՈՒԾՈՂԱԿԱՆ

MCNESS LAXATIVE CANDY

Ծնողներ, մի քոյստիք որ ձեր զաւակները պնդութեան տառապի:

Mcness Laxative Candy ն տիպար լուծողական մըն է ճիշդ շոգոլայի նման: Մանուկները անկէ չափազանց կ'ախորժին որովհետեւ անուշիղէն մը ուտելու չափ հաճելի կը գտնեն զայն: Զօրաւոր լուծողական մը չէ, այլ մեղմ, և ունէ յօգնութիւն չի պատճառեր մարմին: Կատարելապէս ապահով է չափազանց փափկակազմ մանուկի մը իսկ գործածութեան:

Մանուկները առհասարակ լուծողականէ կը խրտչին, հետեւաբար անոնց մէջ պնդութեան տառապողներու թիւը քիչ չըլլար: Հետեւանք — մարմնական և մտային տկարութիւն:

Ահա լուծողական մը որ ձեր զաւակները ամենայն յօժարութեամբ պիտի առնեն:

Ձանացէք որ ձեր տուններուն մէջ միշտ գտնուի այս տիպար լուծողականը:

Կարելի է դիմել բոլոր յայտնի դեղարաններուն:

ՄԵՂՄ

ՀԱՃԵԼԻ



ՓՈՐՁԻ

ՓՈՐՁԻ

MCNESS SHAVING CREAM

Ինչո՞ւ կը չարչարես երեսդ երբ կարելի է ածիլուելու գործողութիւնդ չափազանց դիւրացնել: Mcness մօրուք կուղցնող իւղը թող զայն ընէ քեզի համար:

Կը գտնուի բոլոր յայտնի դեղարանները:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ՝

ՀԱՆԷՊ, 21 ՅՈՒԼԻՍ, 1931

ԹԻԻ 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԲԻՆ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Սուրբիոյ մէջ երեք հայ կրօնական համայնքները գրեթէ լրացուցած են իրենց ուրոյն կազմակերպան աշխատանքները՝ հայ բեկորներէն վերահաստատելու համար հայ կեանքի շէնքը*։ Այս ժողովուրդներէն իւրաքանչիւրը ունի իրեն յատուկ հարցերը, ծրագիրները, զոր լուծելու եւ իրականացնելու համար ունի իր մասնաւոր մարմինները։ Սակայն անոնցմէ զուրաւան եւ ապագային կրնան երեւան գալ համազգային բնոյթ ունեցող խնդիրներ որոնք կրնան եւ պէտք են լուծուիլ միայն համազգային մարմին մը միջոցաւ։ Հայ Աւաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական ունէ մարմին մը, որչափ ալ հեղինակաւոր ըլլայ, իրաւունք ունի միայն իր եկեղեցիին աւանդուած խօսելու եւ զործելու։ Հետեւաբար համահայկական հարցերու համար պէտք է ստեղծել համազգային մարմին մը։

Մամլոթէյնի Հայ թոքախտաւորներու հիւանդանոցը, Հայ Երիտասարդաց ընկերակցութիւնը (նախկին Չափահաս Որբերու Ընկ.ը), համահայկական խնամատարական հարցեր—Հայ Կարմիր Քաշ, յանուն ընդհանուր հայութեան այլեայլ աղբիւրներէ կեղծ գումարներու գործածութիւնը եւ այլն—այս համազգային

մարմինն իրաւասութեան ենթակայ պէտք է ըլլան։ Ոչ-պաշտօնական անհատներ եւ մարմիններ, կամ պատահաբար հապճեպով կազմուած տուժաւան համազգային ժողովներ չեն կրնար պէտք եղած կերպով, իրաւասութեամբ եւ օգտակարութեամբ գործել նման հարցերը լուծելու համար։

Այսպիսի համազգային մարմին մը կրնայ լաւագոյն մէկ ստատարը հանդիսանալ երեք հայ յարանուանութեանց փոխադարձ յարաբերութիւնը աւելի մտերմական ընելու, համերաշխ գործակցութեան գետին պատրաստելու եւ անխտիր բոլոր լաւագոյն ուժերը օգտագործելու։

Հայ ընտանիքին վերականգնումը, հայ նոր սերունդին ներկայ վիճակը եւ ուրիշ շատ մը ընկերային եւ բարոյական հարցերը լուծելու, հայ կեանքին բարոյական մակարդակը բարձրացնելու համար այս մարմինն նախաձեռնութեամբ կրնան մասնաւոր ժողովներ կազմակերպուիլ։

Այս համազգային տեւական մարմինը կրնայ կազմուիլ երեք հայ կրօնական բարձրագոյն պետերուն եւ իւրաքանչիւր յարանուանութիւնէ որոշ շրջանի մը համար ընտրուած պատուիրակներու մասնակցութեամբ, որոնք պարբերաբար իրենց կանոնաւոր ժողովները կ'ունենան Պէյրութի մէջ։

Ներկայիս՝ երբ քաղաքաշիրթ կեանքը այնքան բարձր հանգամանք մը ըստ

*Պէտք է հոս ցանկով յիշել սակայն թէ Հայ Աւետ. Ազգապետարանը տակաւին մինչեւ այսօր թուղթի վրայ միայն գոյութիւն ունի։

տացեր է, երբ ունէ հաւաքական ոյժ, ունէ ընկերային մարմին ապրելու, գործելու համար տեսանելի և անտեսանելի թելերով միւսներուն հետ յարաբերութեան մէջ է, և հետեւարար որոշ չափով մը միւսներէն կախում ունի, ստիպուած է իրմէ դուրս գտնուող պահանջները նկատի առնել, անոնցմէ օգտուել և օգնել: Կղզիայում վերջապէս մահացում կը նշանակէ: Ամէն

տեղ անհատներ և ընկերային մարմիններ գործակցութեան պէտքը կ'զգան իրենց ուրոյն կեանքին գոյութիւնը տեսականացնելու համար: Ժամանակը հասած է, և արդէն ուշ է, որոյս երեք հայ եկեղեցիները իրենց պատահաններէն դուրս ելլելով իրարու մերձեան գործակցութեան համար, որուն լատպոյն օրկանը կրնայ ըլլալ համագոյն տեսական մարմին մը:

ՄՈՒՏԻ ԿԵԱՆՔԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Իմբրսն ըսած է թէ մարդիկ այնքան փափաքող չեն գիտնալ ինչ որ դուն կ'ընես՝ որքան որ կ'ուզեն գիտնալ այն բանը որ քեզի վայն ընել կուտայ: Մուտիին մէջ երկուքն ալ մարդ կ'ուզէ գիտնալ: Դարձեալ ըստած է թէ մեծ մարդեր աշխարհի վրայ ազգած են երեք կերպով, իրենց ըսածներով, իրենց ըրածներով և իրենց եղածով: Մուտի ազգեցութիւնը այս երեք ուղղութեամբ ալ զօրաւոր եղած է: Պերլինի համալսարանին մէջ Գաֆտան սովոր է միշտ ըսել թէ կեանքի մեծագոյն հարցը պատմութեան մեծ դէմքերը գնահատութեամբ ըմբռնելու հարցն է: Եւ Մուտի այս մեծ դէմքերէն մէկն է:

Այս մարդը, որ ինքնաբարւոյն մի ինքնագոյութիւն, ինքնամոտացումի և անմահ տեսական քաջագործութեան հիանալի արձանագրութիւն մը թողած է աշխարհի, այս բոլորին իբր գաղտնիքը մէկ բառ պիտի ըսէ. Բրիտանոյ Քըրիստոս էր անոր կեանքին ազբիւրը, օրէնքը, ոյժը, փառքը, ծրագիրը: Անիկա իր կեանքին մղիչը, գոյութիւնը, վախճանը Բրիտանոյ մէջ գտաւ: Բրիտանոս էր իր դաւանանքը, իր էն իտրունի համոզումը, իր կեանքին ներշնչումը, իր կեանքին ազբիւրը, իր աշ-

խտանքներուն շարժառիթը, իր սերին շարժիչ ոյժը:

Այս կեանքին մի քանի յատկութիւնները. —

* *

Անսասան հաւատքի տէր մէկն էր ան:

Մուտի հաւատքը իրական էր իրեն համար, և զայն իրական ըրաւ ուրիշներուն համար: Անիկայ կրաւորական ըլլալէ աւելի գործօն և մեծապէս գործնական էր:

Մուտի հաւատքը երկու կերպով յայտնուեցաւ: Բոլոր սրտովը Ս. Գիրքը կ'ընդունէր առանց ունէ մաս մը անկէ վեղջելու: Անոր մէջ գրուած բոլոր խոստումները կը պահանջէր իրեն համար, իր բարեկամներուն և ընկերներուն համար: Երկրորդ՝ իր հաւատքը յայտնուեցաւ իր գործ արտադրելու ոյժին մէջ: Մուտի հաւատքը նուիրումի և նոյնքան ալ հաստատումի խնդիր մ'էր, անիկայ կերպ մըն էր ապրելու և ոչ թէ խօսելու, գործելու և ոչ գործէն խոյս տալու: անիկայ հետեւելիք ճամբայ մըն էր և ոչ՝ միայն լուծելիք հարց մը: Անոր հաւատքը կամեցողութիւն մը, միտքի սովորութիւն մը, սիրտի մղում մըն էր, որ միշտ ճշմարտութեան

կոչհրաւն կը պատասխանէր: Բրիտոն-
տի հաւատալ Մուտիի համար կը նշա-
նակէր Անոր մասին խորհելէ և պիտ-
նալէ աւելի բռն մը: հաւատալ կը նշա-
նակէր Անոր առջև երկրպագութեամբ
խոնարհիլ, իր խօսքին համեմատ գա-
նիկայ ընդունիլ, Անոր կամքը կատա-
րել, Անոր ուսուցումը իբր ճշմարտ ըն-
դունիլ և անոր ճշմարտութիւնը ցոյցնել
ապրելով:

Գաղափարի մարդը ժողովուրդին
ուղեղն է, զգացումի մարդը՝ անոր սիր-
տը, արարքներու մարդը՝ անոր ձեռքը:
Մուտի այս երեքն ալ էր: Անիկայ գոր-
ծելու և ուրիշները գործել տալու ահա-
պին ոյժ մ'ունէր:

* *

Անիկայ մէկ նպատակ ունեցող մարդ
մ'էր:

Իր ամէն ըրածին մէջ իր սիրտը կը
դնէր: Կօշիկի վաճառատունի մէջ իբր
ծախող մը, Կիրակնօրեայ Դպրոցի մէջ
իբր ուսուցիչ մը, Աւետարանի քարո-
չիչ մը, դէմքերու և դէպքերու իբր ա-
ռաջնորդ մը անիկայ ցոյցուց թէ իր
բոլոր կեանքին վրայ մէկ մեծ նպատակ
կ'ըլլէր: Անիկայ ոչ միայն նուիրեալ՝
այլ նաև կեղերնացեալ կեանք մ'էր:
Անիկայ ընթանց թէ բոլոր բարոյա-
կան ոյժի, հոգեւոր բոլոր յաջողութեան,
բոլոր իրականութեան գաղտնիքը՝ կեղ-
րոնացում է: Մը. Մուտի իր բոլոր
կեանքին միջոցին իր բոլոր գործին մէջ,
իր բազմազան ձեւերովը, մէկ նպատակէ
կը ներշնչուէր, որ էր Բրիտոնտի փառ-
քը մարդերու փրկութեամբ: Այս նպա-
տակէն երբեք չէր հեռանալ:

* *

Անիկայ անկեղծութեան մարմնա-
ցումն էր:

Մուտիի մահուան ատիւ «Կաթոլիկ
Աշխարհ» (Catholic World) թերթին
խմբագիրը սապէս գրեց. «Ամէն ժամա-
նակ, մասնաւորապէս այս մակերեսա-

յին և արուեստական դարու մէջ, շատ
մխթալական է շփման գալ այսպիսի
խակափայ հոգիի մը. այսչափ անկեղծ
և պարզ բնութեան մը հետ, որ բուն
խակ բնութեան մէկ հայելին կը թուի:»
Մուտիի բեմի վրայ խօսածներուն և Գր-
անձնական կեանքին միջեւ խրամատ
մը չկար, և ոչ ալ իր երկուշաբթի օր-
ուան պայքարին և կիրակնօրեայ պաշ-
տամունքին միջև: Անիկայ երբեք յան-
ցաւոր չեղաւ անկեղծութիւնը յաջո-
ղութեան համար զոհելու մէջ: Մար-
դու մը համար հերոսութիւն է ըսել
ինչ որ իրապէս կը խորհի և երեւնալ
ինչ որ իրապէս իր սիրտին մէջ է: Մու-
տի մեծ չափով ունէր այս հերոսութե-
նէն. իր ներկայութիւնը կեղծիքը կ'ըս-
պաններ և անկեղծութիւն կը ներշնչէր:

* *

Անիկայ իրապէս համեստ և խոնարհ
մէկն էր:

Ճշմարտապէս անկեղծ մէկը միշտ
խոնարհ կ'ըլլայ: Անիկայ ինքզինքը
մանուկի մը պէս կ'զգայ Աստուծոյ ան-
հուն խորհուրդներուն մէջ, աւելի վստի-
մաբաշտութեան կը տենջայ, իր սրտին
մէջ ճշտ, աւելի լոյս» կ'ազդակէ,
մինչև որ Աստուծոյ իրեն յատուկ կիր-
պով գայն հոն կ'առաջնորդէ: Մուտի
այսպիսի մէկն էր: Անիկայ պատրաս-
տակամութեամբ ուրիշներու ծունկե-
րուն քով կը նստէր սովորելու համար:
Տըրմընտ կ'ըսէ թէ Անգլիոյ մէջ բազ-
մութիւնները կը զարմանալին ծափա-
հարութիւններէ, հիացումի ցոյցերէ,
անոր խոյս տալու կերպին վրայ: Մեծ
հաւաքոյթէ մը վերջ երբ ընտրանի
բազմութիւններ բեմին շուրջ կը խըռ-
նուէին անոր ձեռքը սեղմելու համար
անիկայ կերպով մը անհրեւոյթ կ'ըլլար:
Եւ երբ մինչև իր օթեանը անոր կը
հետեւէին դուռը գոց կը գտնէին: Դառ-
նացուցիչ քննադատութիւնը և աւերիչ
գովումը երբեք ազդեցութիւն չունե-

ցան այս մարդուն վրայ, որ «ինքզինքը անմահութեան մէջ մոռցած էր:»

* *

Մեծ իմաստութեան տէր մէկն էր:

Իմաստութիւն կը նշանակէ այն կարողութիւնը որ կը զանազանէ ինչ որ ճշմարիտ և արդար է, ինչ որ մարդկութեան բարձրագոյն շահուն կ'առաջնորդէ, կը զանազանէ վարք ու բարքի իրական յատկանիշերը և յարաբերութիւնները: Եթէ «իմաստութիւնը իւրացուած և կեանքի մէջ կիրարկուած գիտելիքն է» պէտք է Մուտին նկատել իւր մեծ և անսովոր իմաստութեան տէր մէկը: Եթէ, ինչպէս որ Տր. Շէտ կ'ըսէ, «կրթութիւնը ամբարշտած ծանօթութիւններու, բառերու մեղեդի մէկ կոյտը չէ, ալ ուղիղով գործելու զօրութիւնը», Մուտի իր ժամանակին լաւագոյն կրթուած մարդերէն մէկն էր: «Եթէ», կ'ըսէ Տր. Ա. Թ. Փիլսոն, «կրթեալ անհատի մը նշանը կը գտնուի ընդունակութեան և ուշիմութեան միութեան մէջ, բնածին իմացական քայի և նպատակի մը համար զայն գործածելու կարողութեան մէջ, մենք պիտի ըսենք թէ Մր. Մուտի լաւագոյն առումով կրթուած մարդու անսովոր նմոյշն էր:»

* *

Անիկայ աղօթքի մարդ մըն էր:

Ահա հոս կը գտնենք այս մարդուն անմրցելի ոյժին ներքին աղբիւրը: Մուտի համար Աստուած սոսկ օրէնք մը չէր, ոչ ալ վերացական բան մը: Աստուած անոր համար զգացող և խորհող անձ մըն էր, իշխող և սիրող հայր մըն էր, որ կը հետաքրքրուի իր զաւակներուն ազդող յարաբերակից ամէն բանով:

Անոր կեանքին և աղօթքներուն միջև հաղորդակցութիւն մը կար: Երկուքն ալ հսկայական համեմատութեան հասած էին: Իր զաւակը իր հօրը մա-

սին կը գրէ թէ առումով մը անիկայ անգադար կ'աղօթէր: Դժուար է երեակայել պարագայ մը որուն մէջ անիկայ չի կարենար աղօթել: Իր պաշտօնական կրօններուն ներկայութեանը, ընտանեկան շրջանակին մէջ կամ ձիով ճամբորդութեան ատեն աստուածային առաջնորդութեան կը դիմէր շատ զիւրութեամբ:

* *

Անոր տիրող ցցուն յատկանիշն էր խոր և զօրաւոր սէր մը:

Այս սէրը յաճախ կը տեսնուէր անոր նրբութեան և ազնուութեան մէջ: Ոչ մէկ մարդ իրեն չափ աւատածեոն էր և իրեն չափ ուրիշներուն շահերը եւ բարօրութիւնը նկատի կ'առնէր:

Իր դպրոցներուն նիւթապէս օգնող մէկը անգամ մը պնդեց որ պէտք է գպրոցական տարեկան թոշակը 100 տոլարէն 200ի բարձրացնել, թեւադրելով որ 100 տոլար յաւելումը վճարելու համար աշակերտը պէտք է բարեկամ մը գտնէ: «Ե՛ս կ'ուզեմ այդ բարեկամը ըլլալ այս դպրոցները մոնող իւրաքանչիւր աշակերտին համար», ըսաւ Մուտի:

Սէրը անոր կեանքին գերագոյն օրէնքն էր, անոր կրօնքին հոգին: Մուտի համար քրիստոնէութիւնը ապրիլու կերպ մըն էր, որով մարդերու կը սորվեցուի և կը ներշնչուի ռիւքի՝ ինչպէս Յիսուս սիրեց, ապրիլ՝ սիրող և սիրելի կեանքը: Անոր սէրը համապարփակ էր, որ կ'ընդգրկէր բոլոր առողջ բաները: Զաւակը կ'ըսէ. «Եթէ անոր կեանքին գաղտնիքը կ'ուզէք գիտնալ զանիկայ զրուած պիտի գտնէք անոր տապանաքարին վրայ, ուր կը կարդացուի. Այն որ Աստուծոյ կամքը կը կատարէ յաւիտենապէս կ'ապրի:»

Ամփոփեց Տ. Ճ. Ո.

ԾԵՐ ԱՌԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՆՔ ԱՐԺԵՑՆԵԼ*

Շատ կարեւոր հարց մըն է այս, որուն պիտի ջանանք պատասխանել համառօտակի:

Դաստիարակութիւնը բաւական սուղ բան է: Ձեզի համար շատ ծախս եւ շատ զոհողութիւն եղաւ, թէ՛ ձեր ծնողքներուն կամ պաշտպաններուն թէ՛ դպրոցին կողմէն: Ուստի պատշաճ փոխարինութիւն մը ակնկալել արդար է: Դուք ալ տարիներու կեանք եւ աշխատանք վատնեցիք: Ուստի արդար է որ ձեր աշխատանքէն պտուղ եւ վարձատրութիւն ակնկալէք: Ինչու այսչափ ծախս եւ աշխատանք կը վատնուի դաստիարակութեան համար: Որովհետեւ մարդկային ընկերութիւնը համոզուած է թէ ամէն անհատի ապագայ կեանքին համար դաստիարակութիւնը անհրաժեշտ նախապատրաստութիւն մըն է, թէ անիկա մարդը աւելի յարմար կ'ընէ կեանքին մնացած մասը օգտակարապէս գործածելու: Դուք ունեցաք այս նախապատրաստութիւնը, որուն մէջ շատ կարեւոր տարրեր կան, — լեզուագիտական, օգտակար ծանօթութիւններու մտաւոր պաշար, ձեռքի ճարտարութիւն, խօսելու կարողութիւն, եւայլն: Բայց կարեւոր տարրն է ստողը նկարագիրը մը:

Ամէն ընթացաւարտ երազներ եւ տեսիլքներ կ'ունենայ իր ապագային համար: Երբեմն ընկերներն ալ իրարու համար մարգարէութիւններ կ'ընեն: Արդեօք այս տեսիլքներէն ո՞րչափը կ'իրականան. այս մարգարէութիւններէն քանիքն ստոյգ կ'իլլէ: Ես ալ երբ ձեզի պէս նոր ընթացաւարտ կ'ըլլայի,

ձեռքս զոլէճի վկայականին կ'երկնցնէի կարգ մը փայտէն երազներով: Իմ փորձառութենէս երկու բան սորված եմ.

(ա) մարդ գրեթէ կ'ըլլայ ինչ որ ինք հաստատ որոշած է. (բ) Աստուած ալ փոփոխութիւններ կը մտցնէ երիտասարդին կեանքի ծրագրին մէջ, եւ ես գոնէ գտած եմ թէ Աստուծոյ մայրուցած այս փոփոխութիւններն աւելի լաւ ու կատարեալ ըրած են իմ սկզբնական ծրագրիս: Հետեւաբար ձեզի ալ կ'ըսեմ թէ ձեր երազները օգի մէջ թող չմնան, այլ հաստատ որոշումներ ըլլան:

Ի՞նչ ըլլալ որոշած եմ. այս է ամենակարեւորը: Աստուծոյ օգնութեան վրաստահելով՝ ջանացէք ձեր որոշածին ամենալաւն ըլլալու: Սակայն մի՛ մոռնաք որ Աստուած թերեւս շատ փոփոխութիւններ պիտի մտցնէ ձեր ալ ծրագրին մէջ. ուստի իր առաջնորդութեանը հրահանգ եղէք:

Կը յուսամ թէ դուք այս դպրոցին մէջ սորված էք սա մէկ սկզբունքը — ծառայել, օգտակար ըլլալ՝ քան թէ չահագործել: Դուք ձեր դաստիարակութիւնը պիտի արժեցնէք՝ ծառայելով: Դուք Հայ աղջիկներ էք. Հայ ապրեցէք: Ընդհանուր մարդկութեան մատուցուելիք ծառայութենէն զատ, մասնաւոր ծառայութիւն մըն ալ ունիք ձեր ազգին ու ժողովուրդին մատուցանելու: Ձեզ կրթողները, թէեւ Ամերիկացի, գայս չեն մոռնար: Որովհետեւ, նախ՝ անոնք ուրիշ տեղ իրենց հանգստաւէտ դիրքը զոհեցին եւ մեր տարագիր ժողովուրդին հետ բախտակից ըլլալը յանձն առին, որպէս զի մեր դժբախտ մնացորդին ծառայել կարենան: Երկրորդ, իրենց հոս կազմած դպրոցը յատկապէս Հայ աղջիկներուն համար բացած ըլլալով, հայ մշակոյթին ալ լայն տեղ տը-

* Պէյրութի Ամերիկեան Աղջկանց Բարձրագոյն Վարժարանին ամալերջի հանդէսին մէջ 1931ի ընթացաւարտ կարգին խօսուած, Յունիս 2ին:

ւած են անոր ծրագրին մէջ. անոնք ձեզի սորվեցոյցին Հայ լեզուն, Հայ պատմութիւնը, Հայ երգը, հայլն: Անոնք կ'ուզեն որ զուք Հայ ապրիք մարդկութեան մէջը: Քանզում ասոք մը և ժողովուրդ մ'ունիք, որ սակայն վերապրելու արժանի է. զայս ստարնեան ալ կ'ընդունին. անոնք կ'ուզեն որ Հայ մնացորդը ապրի և իբրև Հայ իր նպատակը մատուցանէ մարդկային ընդհանուր քաղաքակրթութեան: Անոնք կը հաւատան թէ մարդկութիւնը զատ Հայ ազգի մը գոյութիւնով ուէ բան տուած չէ, անկէ օգտուած է մինչև հիմա:

Սակայն այսօր ուրիշ ժողովուրդներու մէջ լուծուելու և ձուլուելու վրտանդը մեծ է: Վրայց արգիօք այս աւելի լաւ չէ՞», կ'ըսեն ոմանք. «պզտիկ ժողովուրդները մեծ տառապանքներ կ'ունենան. կ'արժէ տօնայտիլ մեր ճղճիմ իրականութիւնը քաշկոտելու համար. կ'արժէ առանձին գոյութեան համար տաշափ տառապիլ»: Այսու ամենայնիւ մեր ժողովուրդը մեծամասնութեամբ յամառօրէն կատարած է իր ազգային գոյութեան: Ինչո՞ւ ձուլման գաղափարէն կը խրաչինք: Հիմնական պատճառը գուցէ քննադէմ է: Ինչպէս ամէն մարդ մահէն կը խրաչի, այնպէս ալ ժողովուրդներ չեն ուզիր իրենց առանձին գոյութենէն դադրիլ: Ոմանց համար գոնէ, աւելի գիտակից պահանջ մըն ալ կայ, մեր հին պատմութեան յիշատակը, անոր մշակութային բարձր արժէքը, զոր օտարներն ալ կը գնահատեն: Կ'ուզենք Հայ ապրիլ, թէև թիւով խիստ նուազ, որովհետեւ պատմութենէն կը տեսնենք թէ պատիկ ժողովուրդները շատ անգամ աւելի մեծ նպաստ մատուցած են աշխարհի քաղաքակրթութեան, քան թուով իրենցմէ տասնապատիկ կամ հարիւրապատիկ զօրաւոր ժողովուրդները: Իրգիօք կա-

րիւի չէ՞ տպագրային աւելի մեծ քաղաքակրթական ծառայութիւն մը մատուցանել քան ինչ որ անցեալին մէջ մատուցած ենք: Սակայն կ'զգամ թէ, զայս կրնանք միմիայն մեր առանձին գոյութիւնը և յատուկ հայկական մշակութիւնը պահպանելով մատուցանել: Մեր հարեանները գուցէ չընդունին զայս, բայց մենք կ'զգանք: Զեզ պատարարականներն ալ այսպէս կը խորհին:

Սուրիոյ ամէն կողմը ցրուած Հայ բեկորներուն մէջ ձգտումը կը տեսնեմ, ըլլայ անիկա բնագոյային, կամ ըլլայ գիտակցօրէն, շատ անգամ ծայրայեղ և չափազանցեալ կիրպով արտայայտուած, ազգահոլութեան աստիճանին տարուած, բուն զգացում մը որ բնամեր փափուկ կացութիւնը և համեմատական տկար թիւը նկատի չ'առնելով: Ուստի յաճախ կ'օտարացնուի ևս չափաւորութիւնը և խոհեմութիւնը յանձնարարել, քանզի պէտք է. ծայրայեղութիւնը նպատակին յաղթուելուն լոկ կը ծառայէ: Բայց ես ալ իմ սրտիս մէջէն չեմ կրնար ջնջել սա համոզումը թէ Հայը իրաւունք ունի Հայ ապրելու. և կը խորհիմ թէ ձեզի պէս զատարարակեաներդ կրնաք այս մասին ձեր ժողովուրդին յատկապէս օգտակար ըլլալ:

Երեք թեւադրութիւն ունիմ ձեզի տալու. —

1. Հայ ապրելու համար Քրիստոնէայ ապրեցիք: Նախ, մենք Քրիստոնէութեան շնորհիւ եղած ենք զբաղանդութեան և քաղաքակրթութեան տէր ազգ մը: Գարաջաշահանի պէս սղատախոհ և քննադատ պատմագէտ մըն անգամ կը խոտովանի զայս: Այսօր ալ մի միայն Քրիստոնէութեան շնորհիւ կրնանք մեր նկարագրը պահել իբրև բարեկիրթ ժողովուրդ մը: Երկրորդ, աշխարհի մէջ ցաւի բաժին պիտի ունենաք, և կր'օնքը միայն կրնայ տալ ձեզի պէտք եղած կորովը, մանաւանդ

փորձութեանց գիմադրելու ուժը: Եր-
րորդ, մեր ժողովուրդը ի բնէ կրօնասէր
է, և եթէ կ'ուզէք անոր սրտին խօսիլ՝
դուք ալ անկեղծօրէն կրօնասէր ըլլալու
էք. անոր սրտին խօսիլ կրնաք՝ երբ
Յիսուսի հոգին ունիք:

2. Ձեր ոչ-հայազգի դրացիներուն հետ
միշտ հաշտ եւ բարեկամ ապրեցե՛ք. անոնց
օգտակար և բազմալի կ'ըլլէք. մեզի գէ՛տ
անոնց ատելութիւնը կամ նախանձը
կամ զգուսնքը գրգռող խօսքերէն և
արարքներէն զզուշացէք: Ազգասէր
ըլլալու համար հարկ չկայ օտարատեաց
ընդառնու: Դուք միջազգային համերաշ-
խութեան առաքեալներ կ'ըլլէք:

3. Ձեր ժողովուրդին շաւաղոյն եւ սակե-
նաբարձր ծառայութիւնը կրնաք մատուցանել
սակ մեջ, ընտանիքներ կազմելով, ըն-
տիր մայրեր ըլլալով: Մեր քանդուած
ժողովուրդը վերաշինութեան կը կարօ-
տի, և վերաշինութեան գործը ընտա-
նիքէն կ'սկսի: Ընտանիքն է ազգը
պահպանողը: Ֆիզիքապէս ասանկ է.
բայց նաեւ մայրենի լեզուն ընտանիք և
մայր կ'ենթադրէ: Կիներ ընտանիքին
մէջ թագուհի է: Ուստի, նախախնա-
մութեան առաջնորդութեան համեմատ
ջանացէք օգտակար ծառայութիւն մա-
տուցանել ինչ ասպարէզի մեջ ալ ձեր
ձեռքերը գործելու գործ գտնեն, — իբ-
րեւ գրագիր, ուսուցչուհի, հիւանդա-
պահուհի, ևայլն: Բայց մի՛ արհամար-
հէք պատեհութիւնը երբ պատուաւոր
ընտանիք կազմելու առաջարկը ձեզի
դայ՝ թէեւ քիչ մըն ալ համեստ միջոց-
ներով ընտանիք: Ձեր փառասիրու-
թիւնը ուրիշ տեղ մի՛ փնտռէք: Ձեր
բուն կոչումին տան մէջ ըլլալը մի՛ մոռ-
նաք:

Միտքս կը բերեմ այն Ամերիկացի
միախոնարուհիները որ մեր իզական սե-
ռին դաստիարակութեան ծառայեցին.
անոնցմէ քիչեր արգարեւ ամուսնացած
տիկիներն էին, բայց և այնպէս ճշմաւ-

րիտ մայրեր կ'դառն և մեր աղջիկներուն
սորփեցուցին ընտանիքին սրբութիւնը
և մայրութեան վսեմութիւնը: Երախ-
տագրտութիւն կը պարտինք անոնց,
զոր խոնարհ կեանքերով ու ծառայու-
թեամբ յայանենք: Մեր ազգն ալ քո-
կիզքէն ի վեր ամուսնութիւնը վեհ և
բարձր նկատած է: Ուրեմն գիտնա՛ք
արժեցընել մեր այս կրկին ծառանդու-
թիւնները:

ԵՂԻՍ Ս. ԲԱՍՈՒՆԻ:

ՀՈԴԻՍ ԹԱՐՈՒԹԻՒՆԸ

Ի՛նչ գեղեցկութեամբ ծովածոցի ցորեն
Ծառ, ծաղիկ, ծառի գմբուխ հագեր են.
Ի՛նչ արբեցութեամբ կ'երգեն պուրակին
Հովիտներն զուարթ օրհներդ հրճուանդին:

* *

Սա տիկերքը անձիր անսաման
Յարութեան օրէնք մ'ունի անըման.
Կեանքը կը յառնէ դժխեմ ու՛ մահէն
Կեանք ու Մահ զոգցես եղբայրացիք են:

Սերմերն օխտածէտ ձմրան սաստկաշունչ
Մութ ստորերկիւայ գամբանին անշունչ՝
Գեղով մը երգներով իրենց պատանէն
Մարմակուելով յարութիւն կ'առնեն:

Կեանք ու մահ մերձ են իրարու այնքան.
Մէկը սկիզբ մ'է միւսն անոր վախճան.
Մէկը արդիւնք է միւսն անոր պատճառ
— Դրութիւն վսեմ, անյիղի անճառ:

Բնութիւնն անպարոյր զարերով համբուն
Բռնած թաթին մէջ մահն անապորոյն
Վերադարձնէ կեանքի յորձանքին
Պատգամելով մեզ օրէնքը կեանքին:

Ինկած կեանքերն ալ ունի՞ն անպատճառ
Վերածնունդ մը վեհ արեգնափառ:

Յարութիւն մ'ունի հոգիս ալ վսեմ
Պիղծ Գերեզմանի տղանդի ունեմ...

Լաւնագա

Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

**ՊՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ, ՌՈՒՍ ՕՐԹՈՏՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՖՐԱՆՍՈՅԻ
ԱՌԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ**

Պոլշեվիկութիւնը կատաղի պայքար կը մղէ բոլոր կրօններու դէմ ընդհանրապէս և քրիստոնէութեան դէմ մասնաւորապէս՝ զանոնք բնաջնջելու համար։ Ռուսիոյ մէջ կառավարութիւնը կարելի ամէն միջոց կը գործածէ այս նպատակը իրականացնելու։ Մասնաւոր լսարաններ, թերթեր, վէպեր, շարժապատկերներ, թատրոն, կրօնական հաւաքոյթներու ատեն զանոնք չէզոքացնելու նպատակաւ հանդէսներ և խոսովարար ընթացք, հալածանք, մանուկներու համար մասնաւոր գիրքեր, պատկերներ իբր միջոց կը գործածուին։ 1929 թ միջոցին 34 միլիոն էջ հակակրօն գրութիւն հրատարակուած է, 1930 թ առաջին երեք ամիսներուն մէջ ալ 13 միլիոն էջ։ Պիզպոզնիք անաստուած թերթին շաբաթական սպառումն է 400000 օրինակ։

Մինչ Ռուսիոյ մէջ եկեղեցին գաղա-նային անգթութեամբ կը հալածուի փարիզ հաստատուած Ռուս գաղթականներու մէջ կրօնական նոր շարժում մը ըսկսած է։ Ռուս Օրթոտոքս եկեղեցին Փարիզի մէջ արուարձանը Ս. Սէրգիոսի Աստուածաբանական գոլէճը կը պահէ, ուր տնտեսական շատ նեղ պայմաններու տակ ապագայ Ռուս եկեղեցիին համար լաւ պատրաստուած եկեղեցականներ կը հասցնեն։ Ահա այս գոլէճէն և Փարիզի Ֆրանսական Աւետ. Աստուածաբանական Փոլէճէն փրօֆէսորներ ժողովի մը մասնակցեցան, որ կը ձգտէր Ռուս Օրթոտոքս եկեղեցիի և Ֆրանսական Աւետ. եկեղեցիի միջև մերձեցում մը յառաջ բերել։ Ասիկայ տեղի ունեցած է Ռուս և Ֆրանսացի Ռ. Եանոզական Քրիստոնէական Շարժումներու նախաձեռնութեամբ։

Ռուսերը գոհունակութեամբ յիշած են Ռուսիոյ մէջ եկեղեցիի և պետու-

թեան բաժնուելու պարագան, խոստովանած են թէ Ռուս եկեղեցին մեծապէս պատասխանատու է ներկայ կացութեան, յայտնած են թէ Ռուս Օրթոտոքս եկեղեցին վերջ տալով իր մէկուսացեալ կեանքին պէտք է չփման գայ ընդհանուր քրիստոնէութեան հետ։ Այս ժողովին մէջ երկու եկեղեցիներու նմանութիւնները և տարբերութիւնները սիրալիր և յարգալիւր կերպով մէջտեղ դրուած, միասին պաշտամունքի մասնակցած են։ Ռուս պատուիրակները եկեղեցիի խորհուրդներուն իմաստին և կըզերի հեղինակութեան մասին ոչ ծիսապաշտ, լայնախոհ տեսութիւններ պարգած են։ Ռուսիոյ մէջ մինչ հին Օրթոտոքս եկեղեցին ոչնչացումի սպառնալիքին տակ կը գտնուի, արտասահմանի մէջ նոր և լուսաւորեալ Ռուս եկեղեցի մը կը սաղմնաւորուի։

ՆԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ

Այս աղումը կազմուած է Անգլիկան եւ մեծ մասամբ Հայ Զրէի պատկանող անհատներէ, որոնք հետաքրքրուած են Արեւելեան Օրթոտոքս եկեղեցիներու հետ միութեան գաղափարով։ Ասիկայ գոյութիւն առած է 1925ին, երբ Արեւելեան Օրթոտոքս եկեղեցիներու պատրիարքները Անգլիկա գացած էին Նիկիոյ եկեղեցական ժողովին 1600 ամեակը տօնելու համար։

Այս աղումը ամէն տարի անգամ մը ճաշանդան մը կը պատրաստէ անդամներուն եւ մասնաւոր հիւրերուն համար։ Աղումըին նախագահին, Երբի Արքեպիսկոպոսին, թելադրութեամբ Անգլիկան եկեղեցիէն զուրս կարգ մը աւետարանականներ ալ հրաւիրուած էին, որոնք միութեան գաղափարակիցներ են։ Երբի Արքեպ. ի մէջ այլոց յայտնած է թէ առաջին անգամ Արեւելեան եկեղեցիներուն հետ միութիւն յառաջ բերել ձեռնարկուած է՝ առիթ մը օգտագործել կարեւորաւ համար։ Եւ թէ չեն գաղրած աւետարանական եկեղեցիներու հետ միութեան գաղափարով հետաքրքրուէլէ։

ԿՐՕՆՔ ԵՒ ԴԻՏՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ՏՈՒԹ . Ա . ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Գիտութիւնը գոսաւորուած տեղեկութիւն իսկ կրօնքը արմատին մէջ միտքի, գործնականին մէջ պողարեր ճառագայթաբազկ սէր և երջանկութիւն տուող գերբնական կեանք մըն է :

Գիտութիւնը՝ կը բարեփոխէ մարդը, իսկ կրօնքը—հոգեկան գեղեցկութիւնները—կը լծէ մեր կառքերը ամպերէն անդին աստղերուն :

Կան ճշմարտութիւններ որոնք գիտութեան ուսմանին ցանցերէն դուրս կը մնան : Կոպեռնիկոս, Նեւտոն, Լափլաս, Հէյզել, Մարգոնի և Էտիսըններու պաշտած գիտութեան օրէնքներէն անդին կը մնան սիրոյ, գեղեցկութեան, երեւակայութեան, հոգիի փրկչութեան և անմահութեան նման անդրգիտական ճշմարտութիւններ :

Ո՞վ կարող է իր սահմանափակ մըտքին մէջ ամփոփել այդ հսկայ գորգին տիեզերքին՝ երփներանգ ուրուագիծը, իր նուրբ հիւստեալքով, լիակատար հմայքով և գեղեցկութիւններով մանուածաբանութիւնները :

Եթէ Տարվինի՝ երկիր մոլորակի երեւակայական ճամբորդը երեւակ հասնելէ առաջ Յարգողի բիւրաւոր աստղերուն և մոլորակներուն անջրպետին մէջ հանած ներդաշնակութեան առջեւ ապշած, երեւակի իմաստունին հետ խօսակցութեան միջոցին, 18000 տարի ապրող երեւակցին երբ կը վարանի ստեղծագործութեան նպատակի մասին կարծիք յայտնելու, հազիւ ևս ևս զուէն որ 50-60 տարի միայն ապրելու դատապարտուած ենք, ի՞նչ կարծիք կրնանք ունենալ յայտնելու : «Ուր էիր գուն երբոր ես երկրին հիմերը կը զնէի, ըսէ ինծի՝ եթէ իմ աստութեան տեղեկութիւն ունիս» :

Նիւթը ծնունդ կ'ուտայ կեանքին, իսկ կեանքի գեղեցկացոյն արտայայտութիւնն է միտքը . ուրիմն գիտութիւնն ալ պէտք է ունենայ Աստուած մը . ինչպէս կեանքի նոյնպէս միտքի լաւագոյն և գեղեցկագոյն արտայայտութիւնը պէտք է ըլլայ Աստուած ինքը :

Գիտութիւն և կրօնք, երկուքն ալ Աստուծոյ ծառաներն են :

Կրօնքի անցագիրները արժէք մը չեն ներկայացներ իթէ գիտութեան Հիւպատոսարանէն վաւերացուած չըլլան և փոխադարձաբար :

Ո՞չ թերի կրօնքը և ո՞չ ալ կրօնատար գիտութիւնը կրնայ մտքիս և սրբտիս ալեկոծ փոթորիկը հանդարտեցնել : Միայն աչքերս վեր վերցնելով երբ կը դիտեմ աստեղադարձ երկնականամարը, կը տեսնեմ հոն Օրիոն համաստեղութիւնը իր որսի շուներով որսալու վրայ հորիզոնին վրայ, Անդրոմիտոսը ցրուած հիւսքերով անծայրածիր անջրպետին մէջ, կը հարցնեմ ինքիւրենս, ի՞նչ կը նշանակէ այս բոլորը և միտքս կուգայ սատողերը . «Ուր էիր երբոր առաւօտեան աստղերը մեկտեղ փառաբանութիւն կ'ընէին» :

Կրօնքը իր կարգին գիտութեան գերի մը չ'ըլլալէ զատ ունեցած է նաև հսկայ յաղթութիւններ, մահուան և չարչարանքի յաղթութիւններ՝ Կողմա և Պուտտայի պալատներուն մէջ : Քանի Սոկրատէսը մոլեխիւնդ թոյնի պաւթներ ձեռքերին բանտի մութ խորշերու մէջ «Տէր եթէ կարելի է այս գաւաթը թող անցնի ինձմէ» կոչած են : Արիւնքաբլինքի քանի՜ փշոտ Դիթսէմանիներ պատահած են որոնց տիպար հերոսը Յիսուս ինքը եղաւ :

Գիտական մարդոց մով անհրաժեշտ է լինի բարիքներ վաշխել և մարդկութիւնը. արդեօք չի տա՞նք է Հռովմէացի բանաստեղծ Լուկրետիոսի խօսքը թէ «կըրօնքը մարդու ահարկու չարիքներ հասցուցած է»։ Ո՛հ, չի տա՞նք է բայց կըրօնքը որքան հրաշալի գրահ մըն է, նոյնքան ալ ազոտո վերարկու մը կրնայ դառնալ կեղծ շահամուկան կրօնամուկերու վրայ։ Կրօնքի և գիտութեան անունով ի՞նչ մեծ չարիքներ կրնայ հասցնել մարդը։ Անոնց մէջ մարդը ինքն է յանցաւոր։

Դո՛ւրս ելնենք պահ մը մեր աւելորդ ապաշտական, նեղսիրտ, հասարակ, առօրեայ գրադումներէն. հեռանա՛նք երեւակայական սէքերով աշխարհէ, լայնսիրտ և ընկարծակ միտքի աշխարով գիտե՛նք Աստուծոյ անսահման սիրեղերքը։ Եւ պիտի ահանենք որ կրօնք և գիտութիւն անունով գատ գատ գոյութիւններ չկան։ Միևնոյն ճարտարապետի գործն է որ կ'ընթանայ։

Կրօնքի և գիտութեան գիծերը գուցահեռական չեն, յաւիտեան գատ միալու դատապարտուած. անոնք կորածն են, միշտ հակամէտ միանալու եւ կազմելու. օր մը մութ ամպերուն վրայ եօթը գոյներով ծիածանը։

Գիտութիւնը տգիտութեան դէմ պայքարելով օրէ օր նոր քարեր կ'աւելցնէ ճշմարտութեան կորածն կիսակամարին ծայրը, հետազոտութեան նեցուկներով վեր բռնուած. միւս մողմէ կրօնքը միշտ պայքարելով չարին դէմ, օրէ օր նոր քարեր կ'աւելցնէ բարիի և սրբութեան կորածն կիսակամարին ծայրը, հաւատքի նեցուկներով, մինչեւ որ օր մը լրանայ մեծ ճարտարապետի հրաշափառ երկնակամարը։

Գիտութեան մարդիկ թող մշակեն տգիտութեան փուշերով խոպունացած պարտէզները՝ բուսցնելու համար հոն ճշմարտութեան վարդ և միսակներ։ Կը-

րօնքի մարդիկ թող մշակեն մեղքի և խաւարի անապատ դաշտերը, բուսցնեն լոմ հոն սիրոյ, խոնարհութեան և սրբութեան մանրշակներ և ձենածաղիկներ, յուսալով որ օր մը փոխադարձ աշխատութեամբ պարտէզի խոպան վայրերը ծիւ պիտի արձակեն, անուշահոտ կեցուցիկ և վարդերով լեցուն եղիմի դրախտի մը վերածելով աշխարհը։

Կրօնքն ու գիտութիւնը՝ ծանր աշխատանքի և քրտինքի պէտք ունին։ Վիրաւոր և արիւնտաղներ պիտի իյնան ճամբուն վրայ, մինչև որ փշալից գողգոթային վրայ վալլի մեծ յաղթանակի արեւը, քարը մեծ որոտումով մեկզի գլորի, Յիսուսը յարութիւն առնէ խաւար և գիւղական դարձած մարդոց սրտերուն մէջ. կրօնք և գիտութիւն այլափոխուած, խմսատութեամբ և սրբութեամբ կատարելագործուած Աստուծոյ պատկերին նմանութեամբ մարդիկ մէջտեղ գան։

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

Վեց հազար տարուան հնութիւն ունեցող քարէ նամակ մը գտնուած է որ Լակաշթու թագաւորին կողմէ ուղղուած է իրեն ժամանակակից թագաւորի մը։ Մինչև հիմա գտնուած քարէ նամակներուն ամէնէն հինն է։

Մէքսիկոյի մէջ Ամերիկեան հնդիկներու վերաբերեալ երկու հին քաղաքներու գտնուեցան որոնք կը պատկանին թուրք և հարստութեան։ Քաղաքներուն դիրքը տակաւին նշմարուած չէր ունէ Ամերիկացի հնախոյզի կողմէ։

Մանուկներու հետաքրքրութիւնը երաժշտութեան հանդէպ վստ պահելու համար շօշափելի ձայնանիշեր (note.)

կը գործածուին Նիւ Եօքսի զպրօքի մը մէջ. անոնք Նիւթէ շինուած և թելերէ կախուած են:

Մեքենավարներու համար օտեսակ մը տկնոյ պատրաստուեցաւ որ թէ առջևի և թէ հետևի տառակները կը ցուցնէ, ասով մեքենավարը հարկ չի զգար գըլտիսը հախի գործընել:

Տը. Ստրաթօն, Գալիֆօրնիոյ Համալսարանին հոգեբանութեան փրոֆէսորը, գտնական փորձեր կատարելէ վերջ տա եզրակացութեան կը յանդիթէ՝ աչքի և մազի գոյնը և գլխուն ձևը, յարաբերութիւն ունին անհատին բարկացող և վախկոտ ըլլալուն հետ: Իր այս կատարած փորձերէն նա կը հաստատէ թէ՝ սիւ մազեր ունեցող անհատ մը աւելի սաստիկ կը վախնայ քան ան որ նուազ սիւ գոյնով մազ ունի. և այս վերջինը շատ աւելի կը բարկանայ քան բաց գոյն մազ ունեցողը: Բաց գոյն աչք ունեցող մարդիկ ալ աւելի կը բարկանան քան քիչ մը մութգոյն աչք ունեցողները: Նեղ գլխով մարդիկ շատ աւելի թէ՛ բարկացող և թէ՛ վախկոտ են քան լայն գլուխ ունեցողները:

Տաօնեակ մը տարիներ առաջ էր որ գիտնականները հասկըցան թէ աշխարհի վրայ 92 տարբեր գոյութիւն ունին, որոնց 80ը ծանօթ էր իրենց: Վերջին տասը տարուան ընթացքին գտնազան փորձեր և հետազոտութիւններ կատարուեցան և հետզհետէ անծանօթ նոր տարբեր գտնուեցան: Սակայն մինչև անցեալ տարուան վերջերը 85րդը և 87րդ չէին գտնուած: Այս վերջինը գրաւ նուեցաւ Դիկտեմբերին. տակաւին անծանօթ կը մնար 85րդը: Վերջերս տալ գտնուեցաւ ջուրին մէջ՝ 1 առ հարիւր երկրիլիոններով համեմատութեամբ:

Հիւլէին կորիզը միլիոնաւոր վոլդ և լեկտրական ոյժի կ'ենթարկուի բնականներու կողմէ:

Աշխարհի չորս նշանաւոր աշխատանքներուն մէջ մրցում մը տեղի ունեցաւ թէ՛ ո՞վ կրնայ ամէնէն մեծ դատարկ խողովակ մը պատրաստել որուն ելեկտրական ոյժը շատ զօրաւոր պիտի ըլլայ եւ արտադրէ ուժգին ճառագայթում: Շինուած խողովակները երկու միլիոն վոլդ ելեկտրականութիւն արտադրած են և առոնցմէ յառաջ եկած կայծը հինգ միլիոն երկու հարիւր հազար ոյժ ունի:

Այս խողովակներէն մէկը կ'արտադրէ այնպիսի ճառագայթ մը որ բաւականէ աւելի զօրաւոր և թափանցող ոյժ ունի: Եւ ճշգրտած է որ բնագիտական փորձերու համար այս խողովակը ալ աւելի օգտակար է քան բաւականը:

Պարսկաստանի հիւսիսային կողմը տեղատարափ անձրեւի շնորհիւ գետերը ջուրով ողողուեցան և երեւան ելաւ Ռիզա մահմետական թագաւորին գերեզմանը որուն տակ թաղուած գանձուեցաւ Հարուն—էլ—Րէշիտի մարմինը:

Վերջերս Սիկիլիոյ մէջ պեղում մը կատարուեցաւ և յայտ եկաւ չաստուածներու մեծ սրբավայր մը Յոյներու ժամանակէն մնացած: Գտնուած արձանները և չաստուածները Քրիստոսէ վեց դար առաջուան հնութիւնը ունին: Սակէ գտաւ սեւամորթներու գլխակներ ալ գտնուեցան:

Ժամագործ մը յաջողած է հօկայ ժամացոյց մը շինել որ միւսնոյն աստի կը ցուցնէ աշխարհիս կարեւոր բոժոր քաղաքներուն եւ տեղերուն մէջ ժամանան քայիլ ըլլալը:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՀԻՆ ԿԱԶՍ ՔԱՂԱՔԸ

Հոնտոնի համալսարանին եզրկատարի տնօրենի փոփոխությունը, Սըր Ֆ. Փեթրի Պաղեստինի մէջ կազմաքաղաքէն չորս մղոն դէպի հարաւ թէլէլ Աճճուկ կոչուած տեղը պեղումներ կատարած եւ հին մեծ քաղաք մը լաւ պահուած վիճակի մէջ երեւան հանած է։ Ասիկայ Բրիտանոսէ 2000 տարի առաջ լքուած է եւ բնակիչները ներկայ կալաքաղաքը գացած են։

Երեւան հանուած տուները, ուղիղ փողոցները, ջրհորները, հողէ, պղինձէ եւ ոսկիէ առարկաները կը ցուցնեն թէ բարձր մշակոյթով, մաքրասէր ժողովուրդ մը ապրած է հոս։ Փոքր պաշտամունքի վայրերու զուգորդուն քով թաքերը լուալու համար բարձրութիւն մը կայ վրան խեցիներով ծածկուած։ Սրբավայրին մէջ ոչ մէկ պատկեր չէ գտնուած, այս կը ցուցնէ թէ ասոնք իսլամներու նման պաշտամունքի միջոցին նման առարկաներ չէին գործածեր։ Գտնուած առարկաներուն մէկուն վրայ մողթանք մը գրուած է. «Ես զը գոհացնէ Մէրան»։ Այս ետը Տիւրոսի մէկ աստուածը ըլլալ կը կարծուի։

Գտնուած առարկաները կը ցուցնեն թէ այս մեծ քաղաքը առեւտրական յարաբերութիւններ ունէր առաւելապէս Եզրկատարի, նուազ չափով Բաբելոնի եւ ամէնէն քիչ հիւսիսային Սուրիոյ հետ։ Այս ժողովուրդը գեղադէմ Ամորացիները ըլլալ կը կարծուին, որոնք Հիքսոսներու իշխանութեան ենթարկուած էին։ Գտնուած են թէ՛ Հիքսոսներու յատուկ բոլորածեւ փոսերու ձեւով գերեզմաններ եւ թէ՛ հիներու յատուկ վիմափոր դամբաններ։

Ասոնց քաղաքը շրջապատուած է բարձր պարիսպներով որոնք շրջանակի եզերուած են խոր խրամատով։ Բաղաքին ամրութիւնները Հոմսի (Էմէսա)

եւ ուրիշ հիւսիսային քաղաքներու ամրութեանց կը նմանին։ Պարիսպին զոնէն 500 ոտք երկարութեամբ փապուղի մը դէպի գաշտ կ'առաջնորդէ։ Ահա այսպիսի քաղաքներ էին որ իսրայելացիները կը վհատեցնէին։

«ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ ԵՐԿՈՒ ԺԱՄՈՒԱՆ ՄԷՋ»

Ֆրանսայի մեծ Միջագային Գաղթային Ցուցահանդէսը Պուա տը Վէնէն մէջ, 250 օրովոր տարածութեան վրայ կախարդական մէկ ցուցադրումն է աշխարհի հինգ մասերուն։ Ֆրանսայի Գաղթային Նախարարութիւնը 750 միլիոն ֆրանք ծախսելով Ֆրանսական բոլոր գաղութները հոս կը ներկայացնէ իրենց այլապան եւ բազմազոյն ցեղերով, հիւզերով, տաճարներով, սովորութիւններով, հայրն։ Ասիկայ աշխարհագրութեան առարկայական դաս մըն է պատրաստուած մասնաւորապէս Ֆրանսայի երկասարգութեան համար։ Հոս այցելուէ կրնայ տեսնել եւ պալատի հինգ ցամաքներուն տարեցեալ, բարեխառն եւ սառուցեալ գօտիի պատկանող երկրները երկու ժամուան միջոցին։ Ֆրանսայէ գտա որոշ չափով մասնակցած են նաեւ Իտալիա, Հոլանտա, Գանիա, Փորթուգալ, Պրագալ եւ Միացեալ Նահանգներ։ Վերարտադրուած շէնքերուն մէջ ամէնէն ուշագրաւն է կ'ըսուի, Գամպուիայի նախկին մայրաքաղաքին մեծ մեհեանը։ Ասիկայ շինուած է 1847 յիդին կողմանէ, որ ասկէ 1000 տարի առաջ վարդապետ կիանք մ'ունէր եւ ճարտարապետութեան մէջ շատ յառաջդիմած էր։ Այս վերարտադրուած հսկայ մեհեանին հընութեան երեոյթ մը տալու համար քիմիական բաղադրութիւններ գործածուած են։

ԱՒԵՏ. ԿԵԱՆՔ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ, որ իր տիկնոջ հետ Ամերիկա մեկնած էր, իր ճամբորդութեան մասին մեզի զրկած է Մայիս 23 և Յունիս 16 թուակիր երկու նամակներ, որոնցմէ կը քաղենք հետեւեալը։—

Աթէնքի մէջ Վեր. Կ. Սթանպուլեան խօսողներէն մէկն էր Հ. Բարեգործական Ը. Միութեան Սրժաթեայ Յոբելեանին հանդէսին մէջ։ Բոլոր հանդէսը շատ յաջող էր։

Ամերիկեան Ազգկանց Գոլէճին մէջ, Աթէնք, Երևասարգայ Ք. Ընկերութիւնը Մայիս 8-10 ին համաժողով մը ունեցաւ, որուն ընդհանուր նիւթն էր՝ կեանքի արժէք տուող բաները սաստորաբաժանումներով—Գործ և Զբօսանք, Ազատութիւն և Պատասխանատուութիւն, Հաւատք և Նպատակակէտեր, Բարեկամներ։ Այս հաստատութիւնը Ֆալերոնի Ծոցին եզերքը, 40 օրավար տարածութեամբ նոր գետին մը ունի, ուր սկսած են կառուցանել Գոլէճի երկու շէնքերը 125000 տոլար արժէքով։

Տիկ. Մէրիլ Գոպինիայի Հայ. Աւետ. Եկեղեցին այցելեց և եւ ալ այցելեցի Պիրէոնի և Տէրկութիի Հայ Աւետ. եկեղեցիները։

Աթէնքի Կրօնի Դպրոցին մէջ իմ տուած չարք մը դասախօսութիւններու նիւթն էր «Քրիստոնէութիւնը ինչե՞ր աւելցուց կրօնական փորձառութեան վրայ»։

Դպրոցին Վարչութիւնը իր ժողովը ունեցաւ Մայիս 11 ին, բոլոր անդամներու մասնակցութեամբ։

Աթէնքէն դէպ ի Փարիզ շոգեկառքով մեր ճամբորդութիւնը յիշաւ շատ հետաքրքրական էր։ Երկաթուղիի գիծը հարաւային Յունաստանի լեռները կը ճեղքէ և հին Թերմոպիլէի սեպ սարերու երկայնքին երկարող կիրճէ մը

կ'անցնի։ Այս գիծին շինութիւնը ճարտարագիտական մեծ գործ մըն է։ Եռուկո-Սլաւոյ մէջ զարմացանք՝ ընդարձակ դաշտերը և արգասաբեր սև հողը տեսնելով։ Երկրին մայրաքաղաքը, Պէլկրատ, գետին եզերքը զեղեցիկ կերպով շինուած է։ Ասկից դէպի արեւմուտք երկաթուղիի գիծը կ'անցնի դէպի հիւսիս և դէպի հարաւ տարածուող դաշտագետինի մը մէջէն, որուն սահմանները աչքին պարփակումէն դուրս կը մնան։ Պէլկրատէն անդին երկու կառախումբեր կ'ենթեկեն, և աւելի արագ կ'երպով։

Հիւսիսային Իտալիա գեղեցկութեան և առեւտրական գործի երկիր մըն է։

Վերջապէս կառախումբը դէպի լեռները մագլցեցաւ և երբ դէպի յառաջ ալ ճամբայ չէր տեսնուէր Սիմփլոն փապուղիի գահավէժ կտրուածքին մէջէն անցնելով Ալպեան լեռներու հիւսիսային կողմը հասանք. մութին մէջ կէս ժամէ աւելի ճամբորդեցինք։

Բոլոր ճամբորդութեան միջոցին չորս երկար փապուղիներու կամ փապուղիներու շարքերուն մէջէն անցանք. Թուրքիոյ մէջ Իյնթիլի և Կիլիկիոյ Դուռերը, հարաւային Յունաստանի մէջ և հոս Ալպեան լեռները։

Երբ նիւ Եորք ցամաք ելանք Մարգարիտ և Տորոնթի, Տր. և Տիկ. Կուտսէլ մեզ զիմաւորեցին։ Տիկ. Մէրիլ Մարգարիտի դպրոցը զնաց անոր շրջանաւարտութիւնէն շարաթ մ'առաջ անոր հետ ըլլալու և ես դորձով Պոսթոն գացի։ Ես Կուտսիլենց տունը հիւր եղայ, ուր շատ մը հին եւ նոր դէպքերու մասին հաճելի խօսակցութիւններ ունեցանք։ Տր. Կուտսէլ ներկայիս Ամերիկեան Պորտի գործադիր փոխ-Նախագահն է, և Պորտի բոլոր կարեւոր խնդիրները այս կամ այն կերպով իր սեղանը կուգան։ Պոսթոնէն Վասար Գո-

լէճը գացի, որ Հըտսըն զեւրի եղերքը Փուղքիփսի կը գտնուի: Տիկ. Մէրիլ և ես Տէր և Տիկ. Քէյրլինեբու հիւր եղանք, ասոնք Պատերազմէն ասաջ խարբերգի միտնարներէն էին: Մը. Քէյրլի ներկայիս առեւտրական մեծ գործի մը վարիչն է և Հալէպ Գոլէճի ալ խնամակալներէն մէկը:

Ամալքերլի հանդէսներուն ներկայ ըլլալու համար մեծ բազմութիւններ վասար Գոլէճ եկան: Հանդէսները ըսկսան նախկին շրջանաւարտից հասարակութներով, որոնցմէ մէկուն մէջ նիւկայացուեցաւ Շէյքսփիրի խաղերէն մէկը: Կլիֆլըպի և Գոլէճի երգիչ խումբին կողմանէ երգահանդէսներ արուեցան, աւարտող կարգի կողմէ հանդէս, շրջանաւարտից քարոզ բոլոր հանդիսութեանց մասերն էին: Վկայաբաշխութեանց հանդէսին առթիւ 240 ուսանողուհիներ վկայականներ առին և Նիւ Եորքի կառավարիչ Մը. Սուզվէլթ ուղերձ մը ըրաւ: Բոլոր այս հանդէսներուն մէջ ձայն մը, պզտիկ խանդավառ մ'իսկ տեղի չունեցաւ: Ուսումնաւարտուհիներու հագուստին և գործերուն մէջ լաւ ճաշակ և պարզութիւն ուշագրաւ էին:

Չպիտի կրնամ խաղաղականի եղերքը Սիթլ տեղի ունեցող ժողովին մասնակցիլ: Կը յուսացուի որ Միացեալ Նահանգներու ամէն կողմէն պատուիրակներ պիտի գան, բայց ժողովականներու թիւը փոքր պիտի ըլլայ:

Հոս մեծ ջանքեր կը կատարուին առեւտրական կեանքը գործօն պահելու համար: Մեծաքանակ վաճառումներ կ'ըլլան շատ զեղջիւղ գիներով: Այնպէս կը թուի թէ ժողովուրդը զրամուսնի բայց չէն ուզեր զայն ծախսել. և կը վախճան որ զայն պիտի կորսնցնեն թէ ունէ ապրանքի կամ արժեթուղթի կապին զայն: Այս վաճառումներուն

նպատակն է զրամը շրջաբերութեան մէջ դնել:

Հայ Աւետ. Միութեան տարեկան ժողովը Ուորնթսթըր տեղի ունեցաւ մի քանի օր առաջ: Կ'ուզէի հոն ներկայ ըլլալ, բայց հազիւ Պոսթոնէն Նիւ Եորք մեկնելէս ասաջ տեղեկացայ: Տոքթ. Մարտին, Մարուանի նախկին միսիոնար բժիշկը, հոն ներկայ էր:

Նիւ Եորքի մէջ տեսնուեցայ Տիար Թէլֆէհանի և Հայ Կրթական Հիմնարկութիւնէն Տիար Տիրատուր Տիֆֆեանի հետ: Հեռախօսով խօսակցեցայ Տոքթ. Ա. Նազաչեանի հետ: Փրոֆ. Յ. Կրիզորեան Վեր. Պետիկեան Ուորնթսթըրի ժողովին մասնակցեցան:

Բոլոր բարեկամներուն սիրալիր բարեւներով... ***

ԳՈԳԻՆԻՈՅ (Աթէնք) Հայ Աւետ. Եկեղեցիին հովիւը Պատ. Գրիգոր Տէմիրճիեան կը գրէ.—

Յունիս ամսոյն վերջին տասը օրերուն ընթացքին, Աթէնքի արուարձաններէն Գոգինիոյ Հայ Աւետ. Եկեղեցւոյ շուրջ արտակարգ եռուկեա կը տիրէր: Յունիս 21ին, առաւուսն ժամը 10ին մեր եկեղեցւոյ մէջ յոյժ փմաստալից և հոգեւունջ քարոզ մը տուաւ Փրոֆէսոր Լ. Լիւտեան: Յարգելի Փրոֆէսորը զօրեղապէս շեշտեց Աստուծոյ սէր, լոյս, արդար և յաւիտենական կեանք ըլլալու հանգամանքներուն վրայ: Նոյն օրը կէսօրէ ետքը ժամը 5ին Գոգինիոյ Հայ. Աւետ. Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը լուսաւորական բացառիկ հանդէս մը սարքեց, բանախօս հրաւիրելով թիւրքիոյ նախկին թղթատարական նախարար, փոխաշուք Ոսկան Պէյ Մարտիկեանը: Աթէնքի Կեդրոնական վարչութեան տաննապետ Տիար Գ. Բարաղամեան, Գոգինիոյ պատուարժան Թաղական Խորհուրդը ինչպէս նաև ուրիշ պաշտօնական մար-

միններ, խուռներամ ընտրանի բազմաթիւն մը փութացած էին Ոսկան Պէյը լսելու համար։ Գեղարուեստական ճոխ բաժինէ յետոյ, սոյն տողերը ստորագրողը պատիւը ունեցաւ վսեմափայլ բանախօսը ներկայացնելու, մատնանիչ ընկելով անոր կեանքին երեք տարբեր շրջանները։ Նախ իբրեւ ընդհանուր քննիչ Թիւրքիոյ ելեւմտական նախարարութեան մէջ եւ ապա թղթատարական նախարար 1912էն մինչեւ 1914 երկու տարիներ, յետոյ իբրեւ ուսանող Լոնտոնի եւ Զուիցերիոյ համալսարաններուն մէջ՝ հետեւելով ելեւմտագիտութեան, փիլիսոփայութեան եւ քառուածաբանութեան ճիւղերուն մինչեւ 1925, ի վերջոյ իբրեւ ընդհանուր քննիչ Իրաքի նորակազմ կառավարութեան ելեւմտական նախարարութեան մէջ՝ 1925էն մինչեւ 1930։

Ասկէ յետոյ բոմբարձացաւ Ոսկան Պէյը որտաքնդոտ ծափերու մէջ եւ մէկ ժամ տեւող կռու ու շինիչ բանախօսութեամբ մը մագնիսացոյց իր ունկնդիրները։ Վսեմաշուք բանախօսը մի առ մի թուեց խօսքին առնջութիւնը մարդկային ազատութեան, զրականութեան, բեմի եւ մամուլի հետ։ Եզրակացնելով Ոսկան Պէյը թեւադրեց Յունահայերուն օրինապահ եւ ժրջան ըլլալ։ Ոսկան Պէյը ստեղծեց շատ անուշ մթնոլորտ մը՝ բարձր տպաւորութիւն մը ձգելով ներկաներուն վրայ։ Հանդէսի աւարտումէն անմիջապէս վերջ՝ մեր եկեղեցւոյ հոգաբարձութիւնը ընդունելութիւն մը տուաւ ի պատիւ Ոսկան Պէյի՝ ներկայութեամբ երեւելի ազգայիններու։

Նոյնպէս Յունիս 19 ին, կէսօրէ ետքը ժամը 5 ին տեղի ունեցաւ Գողինիոյ Հայ Աւետ. վարժարանի Դաշտահանդէսը նորակառոյց շէնքին շրջափակին մէջ։ Սոյն դաշտահանդէսը իր տեսակին մէջ հոս աննախընթաց ըլլալով արաստվոր ոգիւ որութիւն ստեղծեց

բոլոր հանդիսականներուն մէջ։ Եղան զանազան խաղեր ու մարզանքներ։ Դաշտահանդէսէն վերջ, վարժարանիս տնօրէն Պատ. Միհրան Րէնճիլեան շրջանաւարտից ճաշ մը տուաւ իր բնակարանին մէջ՝ մասնակցութեամբ շրջանաւարտ կարգի, ուսուցչական կազմի, վարժարանի հոգաբարձութեան, Միս Բայսի ինչպէս նաեւ Տէր եւ Տիկին Կէշըլի։ Ծաշին կը մասնակցէին մօտաւորապէս երեսուն հոգիներ։ Յունիս 1 ին տեղի ունեցաւ ամալերջի հանդէսը։ Հետաքրքրական արտասանութիւններէ, երգերէ եւ տրամախօսութիւններէ յետոյ, Պատ. Մ. Րէնճիլեան շրջանաւարտ կարգին կարճ ու իմաստալից ուղերձ մը ընկելով վկայականներ բաշխեց եօթը շրջանաւարտներու։ Պատ. Միհրան Րէնճիլեանին ներկայութիւնը օրհնութիւն մը եղած է մեր կրթական ու եկեղեցական գործերուն մէջ։ Ի բոլոր արտէ կը շնորհասրինք զինքը ի յայտ բերած իր աննախընթաց յաջողութեանց համար։

ԱՅՍ ՏՍՐԻ ՀՍԼԷՊԻ ԲԵԹԷԼ Հայ Աւետ. եկեղեցիի զաւակներէն 13 անձեր զանազան դպրոցներէն շրջանաւարտ եղան։ Պարգեւ Հայտոսթեան Պէյըութի Ամերիկեան Համալսարանէն առաւ Պլասկաւոր Արուեստից տիւղոսը։ Յովհ. Ահարոնեան, Պերճ Հայտոսթեան, Սրսէն Նաճարեան Հալէպի Պոյզ Հայ ԼՍժուէն, Օր. Ազնիւ Զէքիճեան, Ալիս Խաչատուրեան, Հալէպի Ամերիկեան Աղջկանց Բարձրագոյն Վարժարանի Սինեըր կարգէն իսկ Օրթ. Լիւիս Վահանեան, Մարի Սօլագեան, Լուսին Պալեօզեան, Նուէր Թօփճեան, Կիւլինիա Գարճեան, Արփինէ Պուրուշուզեան եւ Մարի Վարպետեան նոյն դպրոցին Սաֆոմոր կարգէն շրջանաւարտ եղան։

Ամսոյս տասին ի պատիւ անոնց եր-

գահանդէս մը սարքուեցաւ նոյն հիւ-
ղեցւոյն մէջ ատենապետութեամբ
Տոքթ. Ե. Քէթէնճեանի, Վեր. Ս. Մա-
նուկեան և Վեր. Կ. Քէթէնճեան
խօսեցան: Տիկ. Կ. Հատիտեան երգէտնի
վրայ ընկերակցութեամբ ջութակա-
հար երիտասարդներու նուագեց:

ԼՐԱՏՈՒ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԳԵՐ. ՂԵՒՈՆԴ Եպիս. Դուրեան, Ամե-
րիկահայերու նորընտիր Առաջնորդը,
Յունիս 1ին Նիւ Եորք հասած է. զինքը
գիմաւորած են բազմաճառ պատուի-
րակութիւն մը, որ օթոներու երկար
թափօր մը կազմած և ոստիկաններու
ուղեկցութեամբ զինքը Ս. Դրիպոր Լու-
սաւորիչ Մայր Եկեղեցին առաջնորդած
են, ուր խուռն բազմութիւն մը հաւաք-
ուած է: Իր հայրական օրհնութիւնը
և պատգամը առնելէն ետքը ժողովուր-
դը ցրուած է: Յունիս հինգի իրիկու-
նը պաշտօնական ճաշկերոյթ մը ար-
ուած է սեղանապետութեամբ Տիար Յ.
Կիւլպէնկեանի. ճաշասրահը մինչև
ղոնները լիցուած է ներկաներով: Ծա-
շէն ետք խօսք առած են շատ մը պաշ-
տօնական անհատներ, որոնցմէ վերջը,
Ատենապետի հրաւերով խօսած է Սըր-
բապանը, որ շատ զգացուած էր իր զը-
տած ջերմ ընդունելութեան համար:
Նիւ Եորքի Ամերիկեան թերթերն ալ
գրած են Դուրեանի ժամանումը տալով
անոր մէկ կարճ կենսագրականը:

ՊՐԻԽՔՍԷԼ ԲՆԱԿՈՂ. Դաշնակահար Ս.
Պետրոսեանի հինգ ու կէս տարեկան
որդին Բաֆֆի արտակարգ կարողու-
թիւն ցոյց կուտայ դաշնակահարու-
թեան մէջ. կրնայ յիշողութեամբ նուա-
գել մեծ վարպետներու ամենագոյն
կտորները: Երաժշտական շրջանակ-
ներու մէջ մեծ ուշադրութիւն գրաւած

է և վերջերս Պէլճիքայի թագաւորին
ներկայացած է:

ԵԿԻՊՏԱՑԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ Ի պա-
տիւ թէյասեղան մը տուած է Գահիրէի
Դեղարուեստատիրաց Միութիւնը. ներ-
կայ եղած են օտար զբոյնիւր, եգիպ-
տացի բանաստեղծներ, մամուլի ներկա-
յացուցիչներ և եգիպտոսի կրթական
նախարարին մէկ ներկայացուցիչը: Ս-
գիպտական բանաստեղծութիւններէ
արտասանութիւններ, ուղերձներ եղած
և հայկական երգեր երգուած են, ե-
գիպտական բոլոր մամուլին մէջ զօրեւո-
տով յիշուած է այս ձեռնարկը և փա-
ռաբանուած է «Հայ Ժողովուրդին» մը-
տաւորական և զեղարուեստական ըն-
դունակութիւնները:»

ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՅ Ա. Կ. Հիւանդանոցին
99րդ տարեգարձը տօնուած է յարմար
կերպով. այս առթիւ 3000 ոսկիի մօտ
նուիրատուութիւններ եղած են:

ՀԱԼԷՊԻ ՄԷՋ «Մարաշի զպրոցասի-
րաց» միութիւն մը կազմուած է Մա-
րաշիի սուանդներու օգնելու համար:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ նախագահը
Վսեմ. Տիար Գ. Կիւլպէնկեան յօժարած
է 15000 օսմ. ոսկիի փոխատուութիւն մը
Մուսուլի հայ գաղթականներուն՝ անոնց
յատուկ տուներու շինութեան համար,
որ կը յուսացուի սկսիլ ձմեռէ առաջ:

Ս. ՊԱՊԸ Երվալիէ տը Սիւլվէսթրի
պատուանշանը տուած է Տոքթ. Դրիպոր
Աստարճեանի, վարձատրելու համար
անոր ձրի ծառայութիւնը Մուսուլի քը-
րիստոնեայ կրօնական և բարեսիրա-
կան հաստատութեանց:

ՏՈՔԹ. ԲԻԶԱ ԹԷՎԳԻԳ Պէյ, նախկին
պետական մարդ, գրագէտ, ուսուցիչ
և չգիտական փիլիսոփայ, իր Հալէպ
այցելութեան առթիւ Հալէպի բժշկա-
կան Անտիքայի հրուերով Հալէպի ա-

Ե. Ք. ԶԱՆԻՑԻ ԷՋՐ

**ԵՐԱՆԻ ԹԷ 21 ՏԱՐԵԿԱՆ ՉԵՂԱՉ
ԳԻՏՅԱՆ ԸՆԴԱՅԻ**

Թէ ապրուստիս համար ինչ պիտի ընէի ու կեանքի գործս ինչ պիտի ըլլար:

Թէ երեսուն տարիքէ վերջը առողջութիւնս մեծ մասամբ 21 տարիքէս առաջ ստամոքսիս մէջ գրած բաներէս կախում ունի:

Թէ սորված ըլլայի դրամս խնայելու կերպը, թէ մաքուր ու ճաշակաւոր հագուելուն առեւտրական շահը ինչ էր:

Թէ 21 տարիքէն վերջը ունակուած թիւնները փոխել շատ դժուար էր:

Թէ հունձքը կախում ունէր ցանուած սերմերէն, թէ արժէք ունեցող բաները ժամանակ, համբերութիւն ու ջանք կը պահանջեն:

Թէ ոչինչէ բան մը ձեռք անցընել անկարելի է:

Թէ աշխարհը պիտի տայ ինծի այն որուն արժանի եմ:

Թէ ճակտիս քրտինքովը պիտի վաստակիմ հոգս:

Թէ կատարեալ կրթութիւն մը ոչ միայն աւելի վարձք կը բերէ, այլ՝ աւելն բանին լաւը:

Թէ ուղղամտութիւնը ամենալաւ քաղաքականութիւնն է, ոչ միայն զըրացիներու հետ վարուելու մէջ, այլ իմ և Աստուծոյս մէջ:

Կու՛մբը թրքերէն լեզուով ճառ մը խօսեցաւ Հալէպի մտաւորականներուն: Յաջորդ օրը Վեր. Կ. Յարութիւնեան իր առնել մտերմական նեղ շրջանակի մը մէջ ի պատիւ իրեն և ազնիւ տիկնոջ ընդունելութիւն մը սարքեց: Համակրելի և մեծ պաշարով լեցուն այս մտաւորականը անուշ տպաւորութիւն թողուց իր ետին:

Թէ ամէն բանի մէջ կատարեալ ճշմարտախօսութեան ու հաւատարմութեան արժէքը ի՛նչ է:

Թէ մեծերուս խօսքը մտիկ չընելը յիմարութիւն է:

Թէ ամէն բան զոր մայրս կ'ուզէր որ ընէի շիտակ էր:

Թէ հայրս վերջապէս «ծեր», հին դըլուխ» մարդ մը չէր:

Թէ հօրս ու մօրս որչափ սուղ արժամ էր իրենց զաւակը մեծցնել:

Թէ Ս. Գիրքի օգտակար ու ներշնչող մասերը, մանաւանդ Յիսուսի կեանքին հետ առնչութիւն ունեցող չորս գիրքերը աւելի սերտած ըլլայի:

Թէ պատեհութեան մեծութիւնը և ուրիշներու ծառայելուն պատճառած ուրստութիւնը աւելի գիտնալ պէտք է:

Թրգմ. ՏԻԿ. ԱՐԱՔՍԻ ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՌ. ԶԱՆԻՑ ԸՆԿԵՐ

Բաղձանքըս առ քեզ, ով «Ջանից» ըն-
[կեր,

Սրտէս է բխեր.

Մեծ սէրն Աստուծոյ, սէրը Գրիստոսի
Կեանքէ՛դ թող հոսի:

Այդ սիրոյն համար, մեզ պիտի ծաղրեն,
Եւ պիտ անարգեն.

Սակայն մենք անյաղթ, աչքերնիս միշտ
[վեր,

Քալենք անվեհեր:

Բախտին դէմ երբե՛ք, դուն մի՛ տրտնջար
Այլ եղի՛ր խոնարհ.

Օրերը ձախորդ, օրերը դաժան՝
Շուտ կ'իրիկնանան:

Մեր ճամբուն վերայ կան շատ արգելք-
[ներ,

Ի՛մ «Ջանից» ընկեր,
Բայց մենք ձեռք ձեռքի, քալենք շա-
[րունակ.

Իբրև հանգանակ
 Իբրև դաւանանք
 Վեհ'ր՝ վեհ'ր սլանանք :

ՓՈԲՐԻԿ ՀԵՐՈՍ ՄԸ

Այն հին օրերուն երբ Ակովալոյ Ուխտ-
 եալներուն դէմ բռնուն հալածանք մը
 կը մղուէր, անոնցմէ շատերը լեռնային
 որջերու կամ քարայրներու մէջ կը պահ-
 ուէին և ամիսներով կ'ապրէին հոն,
 մինչ զինուորները գազաններու նման կը
 հետապնդէին զիրենք, փոքրիկ խումբեր
 կը հաւաքուէին այս թագստոցներուն
 մէջ Աստուծոյ խօսքը սերտելու և լուռ
 աղօթելու նպատակաւ : Քարոզիչին և
 անոր ընկերներուն կերակուր տանե-
 լու պարտականութիւնը ստանձնած էր
 Ճէյմի Տուկլա անունով տղայ մը : Ա-
 նիկայ լեռներու մէջէն այնպիսի ուղի-
 ներ գիտէր որոնք ուրիշներուն անծա-
 նօթ էին, թէ և զինուորները անոր ու՛ր
 երթալը գիտէին, սակայն չէին կրնա-
 բռնել զան : Օր մը, սակայն, Ճէյմին
 բռնուեցաւ և զօրավարը հրամայեց իրեն
 որ իր եկած տեղը վերադառնայ : Փոք-
 րիկը մերժեց հրամանին հնազանդիւ :
 Հրամանատարը զայն բռնելով 500 ոտք
 բարձրութեամբ գահազէծի մը ծայրը
 բերաւ և ըսաւ. «Ճէյմի, պիտի յայտնե՞ս
 մեզի այդ մարդոց թագստոցները թէ
 ո՛չ» : Ճէյմին գլուխը դարձնելով ըսաւ.

— Նետեցէ՛ք զիս, եթէ հարկ է :

Հետեւեալ օրը անոր յօշոտեալ մար-
 մինը գտնուեցաւ հոն :

ԱՆՀՐԱԺԵՇՏ...

Քանի մը հոգի նախարարապետ ըլ-
 լալու համար ամէնէն անհրաժեշտ եղող
 յատկութեան մասին կը վիճէին : Մին
 գիտութիւնը առաջարկեց, միւսը՝ պեր-
 ճախօսութիւնը և ուրիշ մը՝ աշխատան-

քը : Դառնալով Ուիլիւմ Փիթին, որ
 խումբին մէջն էր, առաջնորդը անոց
 գաղափարը հարցուց նոյն նիւթին մա-
 սին : Փիթ այսպէս պատասխանեց.

— Ոչ գիտութիւն, ոչ պերճախօսու-
 թիւն և ոչ ալ ճիշդ պէտք է՝ այլ համբե-
 րութիւն :

ՏԻՐՈՒՆԻ

Հինգշաբթի օր (2 Յուլիս 1931) Պէյ-
 րութի «Ջանից» Ընկերակցութեան ան-
 դամները մեծ կսկիծով լսեցին մահը ի-
 րենց երկու կրտսեր անդամներուն
 (գայլիկներու) :

Կին մը բժշկին տուած հրահանգին
 համաձայն իր զաւակը ծով կը տանի
 լողցնելու : Որպէսզի զաւակը մինակ
 չ'ըլլայ իր հետ կը տանի ուրիշ երեք
 փոքրեր—Ալպէրթ և Յովհաննէս Շնոր-
 հօքեան (երկու եղբայրներ) և Սամուէլ
 Միրիճանեան :

Պէյրութի աւագուտքը լողանքի պա-
 հուն ալիքը Ալպէրթը կը քշէ դէպի պը-
 տուտք մը : Յովհաննէս և Սամուէլ հա-
 կառակ որ Ալպէրթին պէս լողալ չեն
 գիտեր, այս վերջնոյն խեղդուելը տես-
 նելով կը նետուին զայն ազատելու :

Ալպէրթ կ'ազատուի, սակայն երկու
 ազատարարները, Յովհաննէս Շնոր-
 հօքեան և Սամուէլ Միրիճանեան, զոհ
 կ'երթան, թողնելով իրենց պարագանե-
 րը խոր սուգի մէջ, մանաւանդ Սամ-
 ուէլ, որուն ծնողքը անգլաակ մնաց :

Անձնուիրութեան ի՛նչ սքանչելի
 պատկեր թողուցին այս երկու փոքրիկ
 սակայն ճշմարիտ հերոսները :

صاحب الامتياز والمدير المسئول
 القس ق. هاروتونيان